— Մի քանի անգամ գիւղերը գնացի, — ասաց նա, — փորձեցի խօսել գիւղացիների հետ: Ես, որ մեր ժողովների մէջ, ամբողջ ժամերով կանգնած կը խոսէի, եւ իմ խօսելու նիւթը երբեք չէր սպառոի, հաւատացէ, որ գիւղացիների մօտ նիւթ չէի գտնում խօսելու: Նրանց լեզուն չգիտէի, նրանց հասկացողութեան համեմատ բառեր, դարձուածներ պակասում էին ինձ: Շատ անգամ մի առակ, մի առած, մի նահատակի պատմութիւն շատ բան է սովորեցնում գիւղացուն, քան թէ մեր ամբողջ փիլիսոփայութիւնները: Դրա համար է, որ ինձ բոլորովին անպատրաստ եմ համարում այն կոչմանը, որ մտադիր եմ ընդունել... Պէտք է նորից ամէն բան սովորել... Երբեմն այնպիսի հարցեր են առաջարկում, որ չես կարողանում պատասխանել, այդքանը բաւական է, որ քեզ տգէտի տեղ դնէին...

— Դուք այդ հոգսը ուրիշներին թողեցէք — ... ասաց Ասլանը, — դուք զբաղոեցէք ձեր գրական վաստակներով...

— Եթէ թո՛յլ տային... Այդ վանքի վանահայրը հանգստութիւն չէ տալիս ինձ...

— Նրան կփոխեն... Շուտով կփոխեն...

— Դա մի բարութիւն կը լինէր ինձ համար...

— Նրա տեղը «մերոնցից» մէկին կդնեն...

— Աւելի լաւ... — ասաց նա, եւ նրա դէմքը ուրախութիւնից փայլեց:

— Դուք մի բան գրո՞ւմ էք այժմ:

— Ոչինչ չեմ գրում: Երբեմն միայն անկապ նկատողութիւններ եմ անում: Եթէ շուտ չեմ մեռնի, գուցէ ժամանակով այդ նկատողութիւնների հաւաքածոից մի բան կդուրս գա... Բայց ինձ պակասում են գրքեր, գրքերի սաստիկ կարօտութիւն եմ զգում այստեղ...

— Շուտով դուք կունենաք մի լաւ ծանօթ, — մխիթարեց նրան Ասլանը, — գրքերի կողմից նա կօգնէ ձեզ, նրան հնարաւոր է ամէն տեսակ գրքեր բերել տալ ձեզ համար:

— Ո՞վ է դա:

— Վենետիկի Մխիթարեանների աշակերտներից մէկը: Շատ պատոական երիտասարդ է:

— Այո՛, յիշեցի... նրա մասին ինձ գրել էին... Նա եկաւ՞:

— Եկաւ: Այժմ Մուշի մէջ է գտնւում:

Նա ուշադրութիւն դարձրեց իմ վրայ:

— Ո՞վ է այդ պատանին: